ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

01.07.2015թ.
251-ի 7

ՀՀ Տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական հանձնաժողովի
նախագահ պարոն Արտակ Շաբոյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շաբոյան,

“Փարքինգ Սիթի Սերվիս” ՓԲԸ-ն մասնավոր կազմակերպություն է, միակը՝ որն իրականացնում է Երեւանում վճարովի ավտոկայանատեղիների սպասարկման աշխատանքները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել արդյոք “Փարքինգ Սիթի Սերվիս” ՓԲԸ-ն համարվու՞մ է մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպություն:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան